ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025/2026

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

ԿԱՆՈՆ - 3 – ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ
10. ԹԻՄԻ ԱՎԱԳ

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Կանոն 3 – Խաղացողները
10. Թիմի ավագ

Յուրաքանչյուր թիմ պետք է խաղադաշտում ունենա թիմի ավագ, որը կրում է նույնականացման թևկապ: Թիմի ավագը չունի որևէ հատուկ կարգավիճակ կամ արտոնություններ, բայց որոշակի պատասխանատվություն է կրում իր թիմի վարքագծի համար:

Մրցաշարերում կարող են կիրառվել «Միայն թիմի ավագը» ուղեցույցները, որոնք նշված են «Նշումներ և փոփոխություններ» բաժնում:

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

”ՄԻԱՅՆ ԹԻՄԻ ԱՎԱԳԸ”
ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

”Միայն թիմի ավագը” ուղեցույցներ

- Խաղացողների և մրցավարի միջև նորմալ փոխհարաբերությունները թույլատրվում են
- Ցանկացած խաղացող (ներառյալ ավագը), ով անհամաձայնություն է արտահայտում խոսքով կամ գործողությամբ, զգուշացվելու է
- Մրցավարը, անհրաժեշտության դեպքում, կարևոր որոշումները կբացատրի ավագին (ներին) և/կամ միջադեպի մեջ ներգրավված խաղացողին (խաղացողներին):

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

”Միայն թիմի ավագը” ուղեցույցներ

- **Կարևոր իրավիճակներից և որոշումներից հետո խաղացողների բախումը կամ մրցավարին շրջապատելը կանխելու համար.**

✓ Յուրաքանչյուր թիմից միայն մեկ խաղացողի, սովորաբար ավագին, թույլատրվում է մոտենալ մրցավարին և դա անելիս նրանք միշտ պետք է լինեն հարգալից

✓ Մրցավարը կարող է հրահանգել խաղացողներին (բանավոր կամ ժեստերով) չմոտենալ իրենց

✓ Թիմի ավագները պատասխանատու են իրենց թիմակիցներին մրցավարից հեռացնելու հարցում օգնելու համար

✓ Խաղացողները, ովքեր մոտենում/շրջապատում են մրցավարին, երբ դա նրանց թույլ չի տրվում, կարող են զգուշացվել (դեղին քարտ)

✓ Անհրաժեշտության դեպքում, մրցավարը կարող է հետաձգել խաղի վերսկսումը, որպեսզի ավագին (ներին) ժամանակ տրամադրի խոսելու իրենց թիմակիցներին հետ, բացատրելու որոշումը, պահանջելու պատշաճ վարքագիծ դրսևորել և այլն:

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

”Միայն թիմի ավագը” ուղեցույցներ

- Մրցավարն իր հայեցողությամբ կարող է թույլ տալ ավագից բացի ցանկացած այլ խաղացողի մոտենալ իրեն կամ փոխգործակցել նրա հետ, օրինակ. եթե խաղացողը խախտում է թույլ տվել, նրա նկատմամբ է խախտում կատարվել և/կամ նա վնասվածք է ստացել):

″Միայն թիմի ավագը″ ուղեցույցներ

Երբ թիմի ավագը դարպասապահն է

- Մրցավարը պետք է տեղեկացվի, թե որ խաղացողն է իրավասու դարպասապահի փոխարեն մոտենալու իրեն՝ ոչ ուշ քան խաղասկզբին վիճականետումը կատարելը
- Միայն դարպասապահը կամ առաջադրված խաղացողը, ոչ թե երկուսն էլ, կարող են մոտենալ մրցավարին
- Եթե առաջադրված խաղացողը փոխարինվել կամ հեռացվել է խաղադաշտից, ապա պետք է առաջադրվի մեկ այլ խաղացող:

”Միայն թիմի ավագը” ուղեցույցներ

Ուղեցույցների մասին պետք է հիշեցվի թիմերին.

- Նախախաղային խորհրդակցության ժամանակ
- Խաղասկզբից 1 ժամ առաջ՝ 4-րդ պաշտոնյայի կողմից, հանդերձարաններում
- Ցանկալի է, որ մինչ խաղասկիզբը մրցավարը զրուցի թիմերի ավագների հետ.

✓ Մարզադաշտ ժամանելուց հետո՝ խաղադաշտի ստուգման ժամանակ

✓ Խաղից առաջ խաղադաշտ դուրս գալիս՝ թունելում

✓ Վիճականետումը կատարելուց հետո

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

ԿԱՆՈՆ - 5 – ՄՐՑԱՎԱՐԸ
6. ՄՐՑԱՎԱՐԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Կանոն 5 - Մրցավարը
6. Մրցավարի ազդանշաններ

Դարպասապահների կողմից գնդակը ձեռքով/երով/ վերահսկելու ութ վայրկյանանոց սահմանափակման վերջին հինգ վայրկյանների հետհաշվարկը:

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Կանոն 8 – Խաղի սկսումը եվ վերսկսումը
2. Վիճաբանական գնդակ

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Կանոն 8 – Խաղի սկսումը և վերսկսումը
2. Վիճաբանական գնդակ

- **Եթե խաղը կանգնեցնելիս.**

✓ Գնդակը գտնվում էր տուգանային հրապարակում, ապա մրցավարը կատարում է վիճաբանական գնդակի նետումը պաշտպանվող թիմի դարպասապահի համար՝ նրա տուգանային հրապարակում

✓ Գնդակը գտնվել է տուգանային հրապարակից դուրս, ապա մրցավարը կատարում է վիճաբանական գնդակի նետումը այն թիմի խաղացողի համար, որը տիրապետում էր գնդակին, կամ կտիրապետեր գնդակին, եթե դա ակնհայտ է մրցավարի համար: Հակառակ դեպքում վիճաբանական գնդակի նետումը կատարվում է այն թիմի խաղացողի համար, որը վերջինն է դիպել է գնդակին: Վիճաբանական գնդակի նետումը կատարվում է այն տեղում, որտեղ գտնվել էր գնդակը խաղը կանգնեցնելու պահին:

Կանոն 9 – Գնդակը խաղի մեջ կամ խաղից դուրս
2. Գնդակը խաղի մեջ

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Կանոն 9 – Գնդակը խաղի մեջ կամ խաղից դուրս
2. Գնդակը խաղի մեջ

Եթե, առանց խաղին անարդարացիորեն միջամտելու մտադրության, թիմի պաշտոնյան, փոխարինողը, փոխարինված կամ հեռացված խաղացողը կամ խաղացողը, որը ժամանակավորապես գտնվում է խաղադաշտից դուրս (վնասվածք, կարգի է բերում հանդերձանքը և այլն), դիպչում է գնդակին, երբ այն դեռևս խաղի մեջ է, բայց ակնհայտորեն դուրս էր գալիս խաղադաշտից, ապա դա պետք է պատժվի ազատ հարվածով: Կարգապահական պատժամիջոց չպետք է կիրառվի:

Կանոն 11 – Խաղից դուրս
2. Խաղից դուրս խախտում

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Կանոն 11 – Խաղից դուրս
2. Խաղից դուրս խախտում

Խաղից դուրս դիրքը որոշելիս պետք է դիտարկվի գնդակին դիպչելու առաջին կետը:

Այնուամենայնիվ, երբ գնդակը նետվում է դարպասապահի կողմից, ապա պետք է դիտարկվի գնդակի հետ հպման վերջին կետը:

Կանոն 12 - Խախտումներ եվ ոչ պատշաճ վարքագիծ
2. Ազատ հարված
3. Անկյունային հարված

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Կանոն 12 - Խախտումներ եվ ոչ պատշաճ վարքագիծ
2. Ազատ հարված

Ազատ հարված է նշանակվում, եթե դարպասապահը սեփական տուգանային հրապարակում կատարում է հետևյալ խախտումներից որևէ մեկը.

- Ձեռքով դիպչում է գնդակին այն իր տիրապետությունից թողնելուց հետո, մինչ դրան կդիպչեր մեկ այլ խաղացող
- Ձեռքով դիպչում է գնդակին, բացառությամբ եթե դարպասապահն ակնհայտորեն հարվածել կամ փորձել է հարվածել գնդակին՝ խաղի մեջ վերադարձնելու համար.

✓ Դարպասապահին ուղղված թիմակցի միտումնավոր ոտքով փոխանցումից հետո

✓ Ստանալով այն անմիջապես թիմակցի կողմից կատարված կողագծից նետումից

Կանոն 12 - Խախտումներ եվ ոչ պատշաճ վարքագիծ
3. Անկյունային հարված

Անկյունային հարված է նշանակվում, եթե դարպասապահը իր տուգանային հրապարակում ձեռքով/ձեռքերով տիրապետում է գնդակին ութ վայրկյանից ավելի, նախքան այն բաց թողնելը:

Համարվում է, որ դարպասապահը տիրապետում է գնդակին ձեռքով/երով/, երբ.

- Գնդակը նրա ձեռքերի մեջ է, կամ ձեռքի և որևէ մակերեվույթի օրինակ՝ գետնի, սեփական մարմնի միջև է
- Գնդակը պահում է իր բացված ձեռքի ափով/ափերով
- Գնդակը հարվածում է գետնին կամ օդ է նետում

Կանոն 12 - Խախտումներ եվ ոչ պատշաճ վարքագիծ
3. Անկյունային հարված

Մրցավարը կորոշի, թե երբ է դարպասապահը տիրապետում գնդակին, և երբ է սկսվում ութ վայրկյանը, և բարձրացրած ձեռքով տեսնելիորեն կկատարի վերջին հինգ վայրկյանների հետհաշվարկը:

Եթե դարպասապահը ձեռքով/երով/ տիրապետում է գնդակը, ապա մրցակիցը չի կարող պայքարել նրա հետ:

Կանոն 12 - Խախտումներ եվ ոչ պատշաճ վարքագիծ
3. Անկյունային հարված

- Դարպասապահին օգնելու համար մրցավարը բարձրացրած ձեռքով ցուցադրաբար կհաշվի վերջին հինգ վայրկյանները:
- Եթե դարպասապահը ձեռքով/ձեռքերով տիրապետում է գնդակին ութ վայրկյանից ավելի, ապա նշանակվում է անկյունային հարված խաղադաշտի այն կողմում, որն ամենամոտ էր դարպասապահին խախտումը:
- Կարգապահական պատժամիջոց.

✓ 1-ին խախտում – միայն անկյունային հարված

✓ 2-րդ խախտում – անկյունային հարված եվ բանավոր զգուշացում

✓ 3-րդ խախտում – անկյունային հարված եվ դեղին քարտ

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Կանոն 12 - Խախտումներ եվ ոչ պատշաճ վարքագիծ
3. Անկյունային հարված

Մրցավարը.

- Մտովի հաշվում է 8 – 7 – 6
- Բարձրացնում է բացված ափով ձեռքը և մատերով հաշվում է 5 – 4 – 3 – 2 – 1 – 0 (թևի որոշակի շարժումով)
- Բանավոր հաշվում է 5 – 4 – 3 – 2 – 1 – 0՝ օգնելով դարպասապահին և նրա թիմակիցներին

Կանոն 12 - Խախտումներ եվ ոչ պատշաճ վարքագիծ
3. Անկյունային հարված Ուղեցույցներ

- Երբ դարպասապահը լիովին վերահսկում է գնդակը և մրցակիցներից ոչ մեկ չի խանգարում նրան, ապա մրցավարը պետք է սկսի ութ վայրկյանի հետհաշվարկը
- Մրցավարը պետք է, դարպասապահի համար տեսանելիորեն, կատարի վերջին հինգ վայրկյանի հետհաշվարկը
- Եթե հետհաշվարկի ընթացքում, մրցակիցը/ները/ սկսեն ճնշում գործադրել դարպասապահի վրա կամ խանգարել նրան, ապա մրցավարը պետք է նշանակի ազատ հարված դարպասապահի օգտին
- Եթե դարպասապահի գործողություններում չկա խաղի վերսկսման ձգձգման միտում, ապա հետհաշվարկը սկսելու կարիք չկա
- Եթե հետհաշվարկի ավարտին, դարպասապահն արդեն սկսում կամ պատրաստվում է իր տիրապետությունից թողնել գնդակը, ապա կարիք չկա նշանակել անկյունային հարված

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Մրցավարի Վիդեո Օգնական (VAR) արձանագրություն
4. Ընթացակարգ

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Մրցավարի Վիդեո Օգնական (VAR) արձանագրություն
4. Ընթացակարգ

Վերջնական որոշում

- Երբ «Խաղադաշտի դիտում» գործընթացն ավարտվում է, մրցավարը պետք է ցույց տա «հեռուստացույց ազդանշանը» և կայացնի վերջնական որոշումը:
- Մրցումները կարող են նաև ներդնել համակարգ, որի դեպքում մրցավարը հրապարակայնորեն բացատրում և հայտարարում է որոշումները VAR «Խաղադաշտի դիտումից» կամ VAR-ի երկարատև «ստուգումից» հետո, ինչպես նշված է ՖԻՖԱ-ի ուղեցույցներում և VAR ձեռնարկում

Պրակտիկ ուղեցույցներ խաղի պաշտոնյաների համար Դիրքեր, շարժում եվ թիմային աշխատանք

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Պրակտիկ ուղեցույցներ խաղի պաշտոնյաների համար – Դիրքեր, շարժում և թիմային աշխատանք
2. Դիրքեր և թիմային աշխատանք

11 մետրանոց հարված

Մրցավարի օգնականը պետք է դիրք գրավի դարպասային գծի և տուգանային հրապարակի գծի հատման կետում:

Եթե հնարավոր է տեխնոլոգիաների (օրինակ՝ GLT, VAR համակարգ) միջոցով ստուգել դարպասային գիծը՝ դարպասապահի կողմից ժամանակից շուտ առաջ գալու և գոլ է / գոլ չէ իրավիճակների համար, ապա խորհուրդ է տրվում, որ մրցավարի օգնականը դիրք գրավի կողագծի վրա՝ 11 մետրանոց նշակետի ուղղությամբ (որը խաղից դուրսի գիծն է), քանի որ դարպասային գծի վրա գտնվելը ստեղծում է ռիսկ, որ նա չկարողանա հասցնել վերադառնալ ճիշտ դիրքի խաղից դուրս իրավիճակը գնահատելու համար, եթե հարվածը անդրադարձվի:

Եթե կան ՄԼՕ-ներ, ապա ՄԼՕ-ն պետք է դիրք գրավի դարպասային գծի և դարպասային հրապարակի գծի հատման կետում, իսկ ՄՕ-ն պետք է դիրք գրավի 11 մետրանոց նշակետի ուղղությամբ:

Կանոն 10 - Խաղի ելքի որոշում
Կանոն 14 - 11 մետրանոց հարված

Պարզաբանում կրկնակի հպումների վերաբերյալ

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Պարզաբանում կրկնակի հպումների վերաբերյալ

- **11 մետրանոց իրացնողը <u>պատահաբար</u> հարվածում է գնդակին միաժամանակ երկու ոտքերով, կամ հարվածը կատարելուց անմիջապես հետո գնդակը դիպչում է 11 մետրանոց հարվածողի հենման /չհարվածող/ ոտքին կամ սրունքին / ազդրին.**

✓ Եթե գոլ է խփվում, ապա այն կրկնվում է

✓ Եթե գոլ չի խփվում, ապա նշանակվում է ազատ հարված (բացառությամբ այն դեպքերի, երբ մրցավարը կրառում է առավելություն տալու սկզբունքը, եթե պաշտպանվող թիմն ակնհայտորեն օգտվում է դրանից) կամ, 11 մետրանոց հարվածաշարի դեպքում, հարվածը գրանցվում է որպես շեղ կատարված /գոլ չէ/:

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Պարզաբանում կրկնակի հպումների վերաբերյալ

- **11 մետրանոց իրացնողը միտումնավոր հարվածում է գնդակին միաժամանակ երկու ոտքերով, միտումնավոր երկրորդ անգամ է դիպչում դրան, նախքան այն կդիպչի մեկ այլ խաղացողի.**

✓ Նշանակվում է ազատ հարված (բացառությամբ այն դեպքերի, երբ մրցավարը կրառում է առավելություն տալու սկզբունքը, եթե պաշտպանվող թիմն ակնհայտորեն օգտվում է դրանից) կամ, 11 մետրանոց հարվածաշարի դեպքում, հարվածը գրանցվում է որպես շեղ կատարված /գոլ չէ/:

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

ԱՅԼ ՀԻՇԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑԵՐ

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Նախախաղային խորհրդակցություն

- Ակումբի ներկայացուցիչ
- Խաղացողների և դարպասապահների պարտադիր հանդերձանք
- Երկրորդ հանդերձանք
- Այլ հանդերձանք
- 4-րդ պաշտոնյայի հետ կապող օղակ (փոխարինման ընթացակարգ)
- Խորհրդակցության ժամանակ տրված տեղեկատվությունը չի հասնում հանդերձարան

ՀՖՖ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ